

ՇՐՋԻԿ ԳՐԱԴԱՐԱՆԸ՝ ՄԱՐԶԵՐՈՒՄ
ԲԻԲԼԻՈԲՈՒՍ
ՆՎԵՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՆՂԵ ԵՐԿՐԱՄԱՍԻՑ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄՄԻԿ

Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն



2006թ. նոյեմբերին Ֆրանսիայում Հայաստանի տարվան նվիրված միջոցառումներին մասնակցելու համար Հայաստանից Ֆրանսիա մեկնեց 12 հոգուց բաղկացած պատվիրակություն, որը մասնակցեց Վանդե երկրամասում հանքափորների մատուռում բացված ցուցահանդեսին: Այցի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ, ձեռք բերվեց երկկողմ համագործակցության պայմանագիր: Որպես առաջին քայլ՝ ֆրանսիացիները Հայաստանի ազգային գրադարանին նվիրեցին շրջիկ գրադարան (բիբլիոբուս):

Բիբլիոբուսը կահավորված և գրքերով ապահովված հատուկ ավտոմեքենա է, որը նախատեսված է ընթերցողների ոչ ստացիոնար սպասարկման համար:

Այն Ֆրանսիայի Վանդե երկրամասից Հայաստան տեղափոխվեց ՀՀ երջանկահիշատակ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի օժանդակությամբ և առ այսօր կատարում է իր առաքելությունը՝ շրջելով բոլոր մարզերում, մարդկանց մեջ հետաքրքրություն արթնացնելով դեպի գիրքը:

Բիբլիոթուսի շնորհանդեսը տեղի ունեցավ Գյումրու Վարդան Աճեմյանի անվան թատերական հրապարակում: Հայաստանի առաջին շրջիկ գրադարանում բացված ցուցահանդեսը, ուր ներկայացված էին Հայաստանի ազգային գրադարանի հրատարակությունները, մատենագիտություններ, գեղագիտական գրականություն, ամսագրեր, երաժշտական, արվեստի, մանկական գրքեր, պարբերականներ, հմայիլներ, միկրոֆիլմեր, հետաքրքրություն առաջացրեց բնակչության լայն շրջանակների մեջ:

2007 թվականից շրջիկ գրադարանը բազմաթիվ այցեր է կատարել դեպի ՀՀ մարզեր և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Նպատակը՝ համալրել քաղաքային և գյուղական գրադարանները նոր գրականությամբ, ծանոթանալ ՀՀ և ԼՂՀ տարածքներում գրադարանների ընդհանուր վիճակին և խնդիրներին, հենց բիբլիոթուսի մեջ կազմակերպել գրքերի ցուցադրություններ:



2015թ. Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմը շրջիկ գրադարանով այցելել է ՀՀ 5 մարզերի 7 տարածաշրջաններ՝ Արագածոտնի մարզի

Արագածոտնի տարածաշրջան (8), Շիրակ մարզի Արթիկի տարածաշրջան (19), Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջան (7), Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի (14), Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի (11), Լոռու մարզի Գուգարքի տարածաշրջան (5), Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջան (12): Ծրագրի մեջ ներառված են եղել քաղաքային, կենտրոնական և համայնքային գրադարաններ: Այցերի ընթացքում նվիրաբերվել է 3775 միավոր գրականություն:

Հանդիպումների ընթացքում Հայաստանի ազգային գրադարանի մասնագետները համայնքային գրադարանների գրադարանավարների հետ անցկացրել են սեմինար-խորհրդակցություններ գրադարանային խնդիրների շուրջ, տեղեկատվություն է տրվել 2012թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված «Գրադարանի և գրադարանային գործի մասին» օրենքի և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

HASMIK GHAZARYAN

BIBLIOBUS IN THE REGIONS

SUMMARY

Visits of the National Library of Armenia mobile public library "Bibliobus" to the regions of Armenia are provided.